

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԹԱՎՄԱՆ ՈՒԹՕՐԷԿԷՔ

Յգոտոս Թին, Հոգելոյս Սրբազան Պատրիարք
Հօր Թաղման ութօրէքի Ս. Պատարազը մատուց-
ուեցաւ ի Ս. Փրկիչ, ամբողջ Միաբանութեան և
Ժողովուրդի խառն բազմութեան մը ներկայու-
թեան:

Ս. Պատարազը մատոյց Արժ. Տ. Հայկազուն
Գինյ, Ոսկերիչեան, որ և յիշատակի քարոզը
խօսեցաւ (ՏԻ՛ս Սրնիք այս Թիւր, էջ 137, «Յար-
զանքի խօսք» վերտառութեամբ):

Յաւարտ Ս. Պատարազի, Հոգելոյս Սրբազան
Պատրիարք Հօր Թարմ հողակոյտին վրայ, պաշ-
տուեցաւ նաև մասնաւոր Հոգեհանչստեան պաշ-
տօն, հանդիսապետութեամբ Գեր. Տ. Ռուբէն
Արքեպս. Մանասեանի:

Գերեզմանէն դարձին, Միաբանութիւնը Թա-
փորով Պատրիարքարան բարձրացաւ, ուր Գերա-
շնորհ Սրբազանը ընդունեց Միաբանութեան ան-
դամներուն ցաւակցութիւնը:

Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆԻ

27 Յուլիս 1944, Հինգաբքի յես միջօրէի
ժամը 4ին, Միաբանական Ընդհ. Ժողով
գումարուեցաւ Պատրիարական Տեղապահի
ընտրութեան համար: Ժողովին ներկայ եր
մանւ Ս. Էջմիածնի Ազգրնեի Տեղակայի
Պատուիրակ յարգելի Բրօձ. Առն Աբրահամ-
եանը: Ընդհանուր Ժողովը սասնրհինգ վար-
դապետ Հայրերու միաձայնութեամբ Պատ-
րիարական Տեղապահ ընտրեց Գեր. Լուսա-
րարապետ Տ. Կիրևոյ Մ. Վրդ. Իւրայիչեանը:

— Յաջորդ օրը պատշոնագրով մը սոյն
ընտրութիւնը հաղորդուեցաւ Յուսադեմի
Վանք. 4առավարիչին եւ բոլոր պատշոնա-
կան հոգեւոր եւ աշխարհիկ հաստատու-
թեանց:

ՔԱՌՍՈՒՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբեր 3ին, Սրբոց Յակոբեանց Մայր
Տաճարին մէջ Ս. Պատարազ մատուցուեցաւ
Հոգելոյս Սրբազան Պատրիարք Հօր բաղման
հաւատուեցին առիթով:

Հանգստեան հանդիսաւոր Ս. Պատարազը
մատոյց Պատրիարական Տեղապահ Գեր. Տ.
Կիրևոյ Մ. Վրդ. Իւրայիչեան, եպիսկոպոս-
ական խաչ ի գլուխ:

«Հայր մեռ»եմ առաջ պատարազիչ Հայրը
հարոզեց «ես իսկ եմ յարութիւն եւ կեանք»
բնաբանով. ցոյց տուաւ քի քի խօսնուեցաւ
մեղմացաւ մղձաւանջը մահուան: Անիկա
բուն մըն է միայն քիստուեցային համար:
Ու վեր առաւ կեանքը Լուսահոգի Սրբազան
Պատրիարք Հօր, եւ հաւատեց քի Անիկա
իւր մահուան անկոյնին մէջ խաչապ հո-
գիով դիմաւորեց մահը, կիսապարեան իր
ծառայութեամբ սալի յեսոյ գեղեցկազոյն
օրինակը անձնուրացութեան եւ զոհաբերու-
թեան ոգիին:

Յաւարտ Ս. Պատարազի կատարուեցաւ
Հոգեհանգստեան պատշոն եւս, ընդհանուր
յուզումին մէջ ամբողջ Միաբանութեան եւ
հաւատացեալ բազմութեան:

Ս. Պատարազի վերջ Միաբանութիւն եւ
աշակերտութիւն քափօր կազմած, ծանրա-
բայլ եւ լուս վեհութեամբ Ս. Փրկիչ ուղ-
ղուեցան զլիսաւորութեամբ Գեր. Տ. Ռուբէն
Արքեպս. Մանասեանի: Ի Ս. Փրկիչ եւս կա-
տարուեցաւ մասնաւոր պատշոնուեց Հոգե-
հանգստեան, խուռն հաւատացեալներու ներ-
կայութեան:

Ապա նոյն քափօրով վանք վերադարձին.
Միաբանութիւնը Պատրիարարան ելաւ ուր
Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան եւ
Գեր. Տեղապահ Հայրը ընդունեցան Միա-
բանութեան անգամներուն ցաւակցութիւն-
ները: